

## ՀԱՅ ԵՐԱժԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե. - ԺԵ. ԴԱՐ

Յունա-Հայաստանում գտնուող Հայ վտե-  
քերը եւս ազգայնանում են եւ դառնում Հայ  
մշակոյթի օճախներ, ուր պատրաստում են  
Հետազայ դարերի Հայ մշակոյթին նուր-  
ւած մեր մի շարք մատենագիրները:

Ս. Մաշտոցը Հայ ժողովրդի գերագոյն  
ուսուցիչն է, որի ծնկերի առաջ ժողովուրդ-  
ւոսանքին անգամ Հեղեց Հայ այբուբենը եւ  
զպաց նրա ջերմութիւնն ու քաղցրութիւնը:  
Ըստ Խորենացու վկայութեան, Մեսրոպ  
Մաշտոցը սովորեցնում էր «ոչ որպէս ար-  
ւեստ ուսուցանէր, այլ զհոգի առաքելաբար  
աշակերտելոցն տայր»: Ըստ Կորիւնի վկա-  
յութեան, Ս. Մաշտոցը «միաժամանակ ըզ-  
րալուծում էր մատենագրական աշխատանք-  
ներով. «զբաղում շնորհազիր մատանաւ ըզ-  
հարցն եկեղեցւոյ ստացեալ ծովացուցանէր  
զվարդապետութեան խորութիւն եւ լցեալ  
զիշոյր ամենայն բարութեամբ»: Դարձեալ  
բոտ Կորիւնի վկայութեան, Մեսրոպ Մաշ-  
տոցը գրել է «ձառս յաճախազոյնս դիւրա-  
պատումս շնորհազիրս ի լուսաւորութենէ  
եւ Հիւթոյ գրոց մարգարէականաց կարգեալ  
եւ յօրինեալ»: Կորիւնի այս վկայութիւնը  
պատճառ է դարձել որ ոմանք Յաճախապա-  
տումը վերադրեն Մաշտոցին: Մեսրոպ Մաշ-  
տոցի կեանքը եղել է արգիւնաշատ ամէն  
ուղղութեամբ: Խորենացին նրա մասին գը-  
րում է. «Վարուք առաքիլի, զերազանցեալ  
յամենայնի, տեսլեամք Հրեշտակական, մտօք  
ծննդական, բանիք պայծառ, գործովք  
ժուշկալ, մարմնով արտափայլեալ, խոր-  
հրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ,  
յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ու-  
սուցանելոյ անձանձրոյթ»: Մի ուրիշ Հեղի-  
նակ աւելացնում է. «Երկրորդ Լուսաւորիչ  
պտաւ յետ Ս. Գրիգորի»:

Ըստ Կորիւնի վկայութեան Ս. Մեսրոպ

գրել է բազմաթիւ ճառեր, սակայն զմարա-  
տարար Մաշտոցի անունով մեզ չի հասել ոչ  
մի աւարտուն աշխատութիւն: Կասկածից  
վեր է նախ Մեսրոպ Մաշտոցի բաժինը Աստ-  
ւածաշնչի Թարգմանութեան մէջ, յատկա-  
պէս առաջին ասորական Թարգմանութեան  
մէջ: Մաշտոցի վստահը մեծ է նաեւ մեր  
եկեղեցւում ժամադրքի, Մաշտոցի կազմու-  
թեան գործում: Նրա գրչին են պատկանում  
Ապաշխարութեան հոյակապ շարականները:  
Ըստ բանասէրների վկայութեան, մեր Մաշ-  
տոցը եւ ժամագիրքը աւելի ազգային, հայ-  
կական շունչ ու ոգի ունեն, քան ընդհանրա-  
կան եկեղեցական նման գրքերը:

Մեսրոպ Մաշտոցը մեծ է նաեւ իրրեւ ե-  
րաժիշտ: Միջնադարեան ձեռագրերում  
պահպանուած մի վկայութիւն կայ Մեսրոպ  
Մաշտոցի մասին. «Նախ՝ սուրբն Իսահակ  
եւ սուրբն Մեսրոպ ասացին զուրն եղանա-  
կաւոր ձայնս եւ երկու ձայն ստեղի»: Մես-  
րոպ Մաշտոցի երաժիշտ լինելու մասին եթէ  
նոյնիսկ ոչ մի վկայութիւն չիկնի, կը բաւէ  
նրա 'ստեղծած այբուբենը՝ նրան մեծ երա-  
ժիշտ կոչելու, որովհետեւ նա իր արտա-  
կարգ երաժշտական լսողութեամբ կարողա-  
ցաւ ճշգրտօրէն որսալ մեր այբուբենի հնդ-  
չիւնները, ձայնաւոր եւ բազմայն: Եթէ  
այս այբուբենը ամբողջ տասնվեց դար կա-  
րիք չի զգացել ոչ մի փոփոխութեան, ար-  
դիւնք է Մաշտոցի երաժշտական հանճա-  
րին:

Մաշտոցին է վերադրում ՈՐբ դժոբանս  
Հոգւոյն արրին, եւ ընդ ժամանակս ժամա-  
նակս երգեցին զեղանակաւոր երգս շարա-  
կանաց. նախ սուրբն Իսահակ՝ զՂաղարուն  
եւ զկարգն Աւագ Շարաթուն եւ սուրբ Մես-  
րոպ՝ զկարգն Ապաշխարութեան՝ զողորմիկ  
շարականները: Այս երգերը սկզբում «կը-

ցուրդ» են եղել «Ողորմեա Ինձ Աստուած»  
Սաղմոսի, եւ իրենց բովանդակութեամբ էլ  
կաղմոսի ապաշխարական ոգին ունենւում։

ա. Ողորմեա ինձ Աստուած  
Ձի քնդ միայնայ մեղայ  
բ. Առաւել լուա գիւ  
Ի տղմայ յամցանաց  
Ազրիւր բժշկութեամ  
Եւ ողորմեա

Այս կարգի շարականները կամ երգերը  
սրտաբան չեն, ուր հեղինակը ճշտում է,  
նեղում բազում մեղքերի ծանրութեան  
տակ։ Ուզում է մաքրուել յանցանքի, մեղքի  
փորձերից եւ դռնել սրտի խաղաղութիւնը։  
Իր զարհուրելի մեղապարտ վիճակից ուզում  
է ազատուել, եւ զրա համար շարունակ  
ողորմ է ու աւտասուում Աստուծոյ առաջ՝  
որպէսզի իրեն փրկի դժոխքի ահագին  
հրէջ։

Հակառակ իր պարզ բովանդակութեան  
եւ ձեւին, տեսնում ենք որ այս տիպի եր-  
գերը ընդհանրապէս ազատ չափերով են յո-  
րինուել։ Օգտագործուել են զանազան չափի  
տեսակներ։ Այս երգերը սաղմոսներին կապ-  
ւած լինելով հանդերձ, աւելի ինքնուրոյնու-  
թիւն ունեն։ Սաղմոսների զղջական ոգին  
վերցնելով բոլորովին նոր եւ անկեղծ պատ-  
կերներ են ստեղծուում։

Յոյ իմ ես դու Տէր,  
Քաւիշ յամցանաց իմաց

Կամ աւետարանից զանազան դրուագներ  
յարմարեցնելով յիշել իր մեղաւոր լինելը։

Աւագակն աղազակէր ի խաշիմ  
Յիշեա գիւ, Տէր,  
Նովիմ ձայնիւ եւ ես գոչեմ.  
Ողորմեա ինձ Աստուած։

Որքան բառեր պարզ են եւ մեր սրտին  
խօսող, նոյնքան եւ եղանակերը սրտառու  
են եւ պարզ, մտերիմ ու անկեղծ։

Չափաւոր

Ձի քնդ միայնայ մեղայ

Առաւել լուա գիւ

Ի տղմայ յամցանաց

Ազրիւր բժշկութեամ

Եւ ողորմեա

Յոյ իմ ես դու Տէր

Քաւիշ յամցանաց իմաց

Կամ աւետարանից զանազան դրուագներ

Այս երգը երգելիս մարդ համակուում է  
նեղքին անհուն մի վշտով, որը կարծէք մեղ  
զխտակից է դարձնում մեր մեղքերի ճշմա-  
րութեանը։ Սակայն այստեղ զղջումը,  
վիշտը զերծ է ճշտող, հալածիչ տրամադ-  
րութիւնից։ Հեղինակը շատ զուսպ է նոյն-

իսկ իր զղջման մէջ՝ կարիք չի գոյում ողորդուի բարձրագոյն յայտարարել իր մեղաւոր լինելը Կալ ընդհակառակը, բարի ու աղնիւ մարդու գիտակցութեամբ եւ թախանձային պաղատում է Աստուծուն որ ինք մեղաւոր է եւ իրեն փրկի ահեղ դատաւարանից։

### Մ Ո Վ Ս Է Ս Ք Ե Ր Թ Ո Ղ

Մովսէս Քերթոզը եղել է Թարգմանչաց կրտսեր սերնդի ներկայացուցիչներից մէկը։ Վաղեմ է Վերաբերուողի համար։ Մովսէսը եղբայրն է եղել Մամբրէ վերծանողի (կարգացող)։ Երկուսն էլ վաղեմ են մեծ համար։ Մովսէսը կատարելագործուել է նաեւ արտաքին գիտութիւնների մէջ եւ նրան շատերը նոյնացրել են Մովսէս Խորենացու հետ, որ սխալ ենթադրութիւն է։

Մովսէս Քերթոզի մասին կենսագրական տուեալներ չստ Բլատ են. ենթադրում է որ նա ծնուել է մօտաւորապէս 480-ական թուականներին։ Նա ունեցել է աշակերտներ, որոնցից յիշում են Քէրթոզոս Քերթոզ, Պետրոս Քերթոզ եւ Եղբայր Աղեղացի. այս վերջինը նաեւ իր էր (527-557) իր ճարտասանութեամբ եւ կատարած ուսուցչական-մանկավարժական ծառայութեամբ։

Մովսէս Քերթոզի մեծապէս հռչակուել է իրեն իմաստասէր եւ բանաստեղծ։ Մասին է ուսուցչական լայն գործունէութիւն։

Նա ունի գրական մեծ վաստակ իրեն հեղինակ եւ թարգմանիչ։ Իր երկերից դատարարով, մենք զազափար ենք կազմում որ նա եղել է յունագէտ, գիտակարող արտաքին գիտութիւնների, քերթողական, հետադարձական եւ իմաստասիրական արուեստների։

Նրա գրական վաստակը բաղկանում է.

1. «Մեկնութիւն Դիոնիսիոս Թրակացու Քերականութեան»։

2. «Գիրք Պատուի»։ Այս գիրքը խմբագրուել է Արթուրոս անուն մի յոյն հետեւողութեամբ եւ իր հետադարձական դատարարից զօրածուել հայ դպրոցներում։

3. «Յաղագս Միոյ Բնութեան Բանին» Մարմնացելով։

4. «Շարականներ»՝ «Աստուածայայտութեան, ճրագալույցին», «Մենդեան կամ Աստուածայայտութեան Աւարցն» (Ա. 6), «Կարգ Յարութեան» (Ա. 2, Դ. 4), «մեծացուցէնք ինչու, «Տեստերնդոտալին» եւ «Վերափոխման աւար»։

Նրա հեղինակած շարականները իրեն բանաստեղծութիւն զրեթէ լաւագոյններն են ամբողջ շարականացում։ Ուշագրաւ են նաեւ եղանակները իրենց յաշականութեամբ, զեղեցկութեամբ եւ անկեղծութեամբ ու ջերմութեամբ։ Օրինակ «Անթուս Մարիէր», իրեն բանաստեղծութիւն հոյակապ մի ստեղծագործութիւն է՝ նուիրած Մ. Աստուածածնին, իսկ եղանակը գերազանցում է բանաստեղծութեանը։ Պէտք է ենթադրել որ Մովսէս Քերթոզը իր գրած շարականների թուր եղանակներն էլ ինք է յօրինել եւ ջանքերի վերածել։ Այստեղ բերում ենք «Անթուս Մարիէր» գրական տեքստը եւ վեր հանում նրա արժանիքները.

Անթուս մարիէ, ամբարտապար շաւիղ, վերաբուսեալ յարմատոյն յետեալ.

Զփեց Եսայիա կամիա վերագոչեաց

Եօթմարփեան շնորհաց հոգւոյն

Ընդունարաւ գոյ՝ Աստուածածին եւ կոյս.

Զփեց մեծացուցանեմք։

Համեղամաշակ պաղոյն բամաւոր բարուանկ.

Յորմէ կթիցաւ մեզ աղկոյզն անպառ,

Յաւաթաթիւն տրտմեցեալք ի մաշկմամբե Մառոյն գիտութեամբ.

Սրբուհի ամառատ,  
Ամենեքեան գրեց մեծացուցանմա՛ք :

Քաղաքավարեալ ի մարմնի, ամառատ վա-  
րու՛ք՝

Այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակ-  
նարկութեամբ,  
վերափոխեցար յարքայաւքեան որդւոյ ին  
ու Աստուծոյ մերոյ. բարեխօս խաւսո-  
վանողագո

Ջրեց մեծացուցանմա՛ք :

Իրբեւ քերթուած, բանաստեղծութիւնը տեսնում ենք որ ազատ չափով է կառուց-  
ւած: Առաջին իսկ տողից զգացում է բա-  
նաստեղծի ճաշակն ու թոփշը «անթառամ  
ծաղիկ» երկու բառերի զուգորդութեամբ.  
Իսկ արդէն զեղեցիկ եւ հմայիչ պատկերն  
ենք տեսնում Ս. Աստուածածնի մաքուր  
կուսութեան. ինչպէս անթառամ ծաղիկը  
միշտ զեղեցիկ եւ թարմ է մնում, նոյնպէս

եւ Աստուածածինը իր մաքուր կուսութեամբ  
անթառամ է մնում մեր սրտերում:

Նոյնքան հոյակապ պատկեր է նաեւ  
«Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարու-  
նակ, յորմէ կ'իջեցաւ մեզ ողկոյն անսպառ»:

Աստուածածնին նմանեցնում է բանաւոր  
Համեղ պտղի, որը կ'թուելով ու բախու-  
թեան անսպառ աղբիւր է դառնում տըրտ-  
մաւնեցիկ. թւում է «բանաւոր պտուղ»,  
«Համեղաճաշակ» արտայայտութիւնները  
ներս ստեղծագործ մտքի արշաւին են:

Երբորդ տան մէջ կարծէք տեսնում են  
Կոմիտաս Կաթողիկոսի Աձնձինքի սերմե-  
քը. «Քաղաքավարեալ ի մարմնի, ամառատ  
վարուք»: Նոյն արտայայտութիւնը տարբեր  
ձեւերով օգտագործել է նաեւ Կոմիտաս Կա-  
թողիկոսը Հռիփսիմեանց կոյսերի անմե-  
ղութիւնն ու անաբատութիւնը մարմնաւոր-  
ելու համար:

Պէտք է ենթադրել որ այս շրջանում նը-  
ման զոգտրիկ երգեր չառ են եղել, բայց  
դժբախտաբար մեզ չեն հասել:

#### Կ Ո Մ Ի Տ Ա Ս Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

Կոմիտաս Կաթողիկոսի ծննդավայրը ե-  
ղել է Արագածոտն գաւառի Աղցի գիւղը եւ  
դրա համար էլ կոչուել է Աղցեցի: Նրա ծը-  
ննդեան թուականը յայտնի չէ (պէտք է  
ծնած լինի Զ. Դարի երկրորդ կիսում):

Ի. Դարում մեծ զարգացում են ապրում  
եկեղեցական դրականութիւնը եւ ճարտա-  
րապետութիւնը: Այս շրջանի ամենակրօնա-  
ւունջ եւ առաջին բանաստեղծն է Կոմիտաս  
Կաթողիկոսը (նախապէս Տարօնի եպիսկո-  
պոս):

Կաթողիկոս է օծւում 615 թուականին:  
Հայ եկեղեցու պատմութեան մէջ Կոմիտաս  
Կաթողիկոսը յիշում է որպէս շինարար եւ  
բանաստեղծ կաթողիկոս: Նա Ս. Հռիփսիմէ  
մանքի փակակալն էր (լուսարարագետ):  
Բանաստեղծ հոգեւորականի սրտում ցանկու-  
թիւն է յառաջանում նորոգելու Ս. Հռիփսի-  
մէի տաճարը, որովհետեւ «դի կարի ցածր

եւ մթին էր շինուածն, զոր շինեալ էր սըր-  
բոյն Սահակայ»:

618 թուականին Կոմիտասը ձեռնարկում  
է շիրիմի քանդման աշխատանքներին: Բաց-  
ւում է «արքունական մարզարիտն, մարմին  
ոււրբ տիկնոջն Հռիփսիմէ»: Հռիփսիմէ  
կոյսի դադաղը կնքուել էր Գրիգոր Լուսա-  
ւորչի եւ Ս. Սահակի մատանիներով: Կոմի-  
տասը չի համարձակւում քանդել կնիքները  
«եւ կնքեալ իւրով եւս մատանեաւ, որ ար-  
ժանի իսկ էր կնքել զայսպիսի մարզարիտ ե-  
րից հաւատարմաց երբորդ մատանեաւ»:  
Այս բոլորը պատմում է Սեբէոս պատմիչը,  
որ ականատեսն վկան է եղել տաճարի շինու-  
թեան:

Կոմիտասի շինածը այսօրուան տաճարն  
է: Պատմիչի վկայութեամբ Հռիփսիմէի  
տաճարի շինութիւնը մեծ խանդավառու-  
թիւն է յառաջ բերում: